

Սիրելի հայրենակիցներ,

Սօտաւորապէս մէկ տարի առաջ, ճիշդ այս օրերուն, երբ կը պատրաստուէինք հրատարակութեան տալու «Լրատու»ի ամառուայ թիւը, շատ մեծ դժուարութեամբ կարողացայ քանի մը տողեր քով քովի բերել նկարագրելու մեր փոքր երկրին դիմագրաւած անորոշ ապագան: Մխիթարանքի խօսքեր չունէի ըսելիք, այլ միայն կը խրատէի ունենալ լայն համբերութիւն դիմագրաւելու մեր դիմաց գրտնուող դժուար օրերը՝ առանց սակայն յուսահատելու:

Կիպրոսի ժողովուրդը շատ սուղ գին վճարեց ու տակաւին կը շարունակէ վճարել, սակայն վերջերս կատարուած արժեւորումներուն եւ հրապարակուած տեղեկութիւններուն համաձայն, լոյսի նշոյլ մը կը նշմարուի Կիպրոսի տրմտեսութեան վերականգման ապագային առնչութեամբ, եւ կառավարութեան իսկ հաստատումով, կը սպասուի որ երկիրը մուտք գործէ միջազգային շուկաներ, ակնկալուածէն մէկ տարի առաջ: Այս մէկը, սիրելի հայրենակիցներ, շօշափելի քայլ մըն է դէպի աւելի լաւ ապագայ: Ինչ կը վերաբերի քաղաքական ոլորտին, երկխօսութիւնը կը շարունակուի թէ՛ բանագնացներու մակարդակին եւ թէ՛ երկու կողմերու առաջնորդներու հերթական հանդիպումներով, յուսալով որ այս անգամ անոնք կը յանգին հիմնական ու արդար լուծումի մը:

Գալով մեր գրասենեակի եւ Կիպրահայ գաղութի ներքին ու ազգային կեանքին, հակառակ տիրող իրավիճակին, ծրագրուած ձեռնարկներու եւ միջոցառումներու հոլո-

վոյթը շարունակուեցաւ ըստ սովորականին: Այս եռամսեան կարելի է ըսել եղաւ բաւական աշխոյժ, տեսակցութիւններով եւ ծրագրաւորումներով լեցուն, որոնց արդիւնքը սկսած ենք քաղել:

«Լրատու»ի յաջորդող էջերուն մէջ անդրադարձած ենք անոնց մասին, սակայն կը փափաքիմ յիշել ամենակարեւորը, որու մասին նշում կատարած էի «Լրատու»ի նախորդ թիւով, երբ առաջին հանդիպումս ունեցայ տեսակցելով Հաղորդակցութեանց եւ Գործերու հանգուցեալ նախկին Նախարար Տասոս Միթցոպուլոսի հետ, որ կը վերաբերի Հայաստանի եւ Կիպրոսի Հանրապետութիւններու կողմէ միացեալ դրոշմաթուղթ թողարկելու ծրագիրին՝ Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով: Այս ծրագիրը վերջնականացաւ 30 Յունիս 2014-ին, երբ ՀՀ Փոխադրամիջոցներու եւ Կապի Նախարար Պրն. Գագիկ Բեգլարեան, պաշտօնական գիրով մը, Հայաստանի Հանրապետութեան համաձայնութիւնը փոխանցեց Կիպրոսի նորանշանակ Հաղորդակցութեան Նախարար Պրն. Մարիոս Տիմիթրիատիսին:

Ինչպէս արդէն տեղեակ էք, Յուլիս 14-27, Նարեկ Վարժարանի շրջանաւարտները, ընկերակցութեամբ երկու ուսուցիչներու, պիտի մեկնին Հայաստան: Անոնց կը մաղթեմ բարի շրջապտոյտ եւ ապահով վերադարձ:

Ինչ կը վերաբերի «ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոնին, միշտ հաւատացած եմ թափանցիկ գործունէութեան կարեւորութեան եւ առ այդ, ներփակ պիտի գտնէք կեդրոնին հիմնադրութենէն մինչեւ օրս, այսինքն 2013-2014 կրթական տարեշրջանի տեղեկագիրն ու հաշուեկշիռը:

«Լրատու»ի այս թիւով, ներփակած ենք նաեւ Կիպրոսի Պետական Համալսարանէն ներս Հայերէն Լեզուի Դասընթացներու 2014-2015 կրթական տարեշրջանի արձանա-

գրութեանց վերաբերեալ եռալեզու յայտարարութիւնը:

Այս բոլորին կողքին, Երեսփոխանական Գրասենեակը իր տարեկան Կիպրոս-Հայաստան մշակութային յարաբերութեան ծիրէն ներս, այս տարուան համար ծրագրած է Հայրենիքէն Կիպրոս հրաւիրել Ինգա եւ Անուշ Արշակեան քոյրերը: Ելոյթը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 15 Նոյեմբեր 2014-ին, Ստրովոլոսի Քաղաքապետարանի սրահին մէջ, երեկոյեան ժամը 19:00-ին, որու ընթացքին իր մասնակցութիւնը պիտի բերէ նաեւ Համազգայինի «Սիփան» պարախումբը, քանի մը պարերով: Յոյսով ենք, ինչպէս մեր գրասենեակի կազմակերպած բոլոր ելոյթներուն, այս անգամ եւս ներկայ կը գտնուիք խումբերամբ բազմութեամբ ու կը վայելէք անմոռանալի պահեր: Այս մասին թերթիկ մը ներփակած ենք «Լրատու»ի այս թիւով:

Խօսքիս աւարտին, բոլորիդ կը մաղթեմ հանդարտ ու կազդուրիչ ամառնային արձակուրդ:

Վարդգէս Մահտեսեան

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Հպատակություն

Ապրիլ ամսուայ վերջաւորութեան, երկար տարիներ Նիկոսիա օրինաւոր բնակութիւն հաստատած հայրենակից մը, ստացաւ Կիպրական հպատակութիւն:

Ապրիլեան Եղեռնի 99-րդ ամեակի ոգեկոչման ձեռնարկներ



Հինգշաբթի, 10 Ապրիլին, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան ելոյթ ունեցաւ Կիպրոսի խորհրդարանէն ներս, ներկայութեամբ խորհրդարանի բոլոր անդամներուն: Պրն. Մահտեսեանի ելոյթէն առաջ, խորհրդարանի անդամները մէկ վայրկեան

յոտնկայս լուծեամբ յարգեցին Հայոց Ցեղասպանութեան 1.5 միլիոն անմեղ նահատակներուն յիշատակը:



Կազմակերպութեամբ Հայկական Ցեղասպանութեան Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբին, Ապրիլեան ձեռնարկներու մեկնակետը սկսաւ Չորեքշաբթի, 23 Ապրիլ 2014-ի Երիտասարդական քայլարշաւով, կ.ե. ժամը 6:00-ին, Նիկոսիոյ քաղաքի Մակարիոս պողոտայէն ուղղուելով դէպի Արմենիաս եւ Լիմասոլ պողոտաներու խաչմերուկ, ուր անոնց միացան համայնքի մնացեալ անդամները՝ յառաջանալով դէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակը: Եղեռնի Նահատակներու Յուշահամալիրին առջեւ, երեկոյեան ժամը 7:30-ին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ գլխաւորութեամբ թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Վարուժան Արքեպիսկոպոս Հերկելեանի: Հսկումի միջոցառումին խօսք առին Վարուժան Սրբազան եւ Պետական Ներկայացուցիչը: Օրուան



բանախօսն էր եւրոերեսփոխան եւ ՏԻՍԻ կուսակցութեան անդամ հայրենասէր Տոթթ. Էլէնի Թեոխարուս:

Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Վարուժան Արք. իր պատգամին մէջ ըսաւ, թէ այսօրուրնէ կը մտնենք հայկական ցեղասպանութեան 100-ամեակի շեմէն ներս: Զետեւաբար, այսօր զգաստութեան գալու եւ նահատակներուն առջեւ ուխտելու եւ ուխտը կատարելու հրամայականին առջեւ կը գտնուինք ազգովին, մինչեւ երեւումը արշալոյսին, որ պիտի տայ աւետիսը վերջնական յաղթանակին:

Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան խօսք առնելով իր պատգամին մէջ շեշտեց, թէ մեր պահանջքը արդար հատուցումն է եւ ո՛չ թէ վրէժխնդրութիւնը: Մենք պիտի շարունակենք մեր պահանջատիրութիւնը եւ մեր պարտքն է մեր յիշողութեան մէջ վառ պահելու Զայ ժողովուրդին հանդէպ գործուած Ցեղասպանութիւնը: Ո՛չ կրնանք եւ ո՛չ ալ իրաւունքը ունինք անհատոյց ձգելու մեր նախնիներուն հանդէպ գործուած ոճիրը:



Օրուան բանախօս, տիկին Էլենի Թեոխարուս իր պատգամը սկսաւ մէջբերելով բանաստեղծ Նիքիֆորոս Վրէդագոսի հետեւեալ խօսքերը. «Այս կապոյտ երկինքը եւ արիւնոտած լեռները, որքան որ մերն են, ձերն ալ են»: Ապա, ան անդրադարձ կատարեց Հայ ժողովուրդի դարաւոր պատմութեան կարեւոր եղելութիւններուն, հասնելով մինչեւ մեր ներկայ օրերը: Շարունակելով ան ըսաւ, թէ համաշխարհային քաղաքակրթութեան պատգամը ժողովուրդներու մղած ազատագրութեան պայքարն է: 2007-ին Պոլսոյ մէջ Հրանդ Տինքի սպանութիւնը եւ վերջերս Սուրիոյ Քեսապ բնակավայրի ժողովուրդին տեղահանութիւնը 1915-ի ցեղասպանութեան շարունակութիւններն են: Միասնաբար պիտի շարունակենք թրքական վայրագութիւններու դատապարտումը մինչեւ հասնինք մեր դատերու արդար ճանաչման: Խաղաղութիւն չկայ առանց արդարութեան եւ արդարութիւն չկայ առանց ազատութեան: Թոյլ պիտի չտանք ոեւէ մէկուն ոտնակոխելու մեր արժանապատուու-

թիւնը: Յոյն եւ հայ ժողովուրդները պէտք է ապրին ու բարգաւաճին, միշտ իրարու թիկունք կանգնելով, որպէսզի կարենան գոյատևել ու յառաջդիմել: Տոքթ. Թեոխարուս եզրափակեց իր խօսքը ըսելով՝ կեցցե՛ ազատ ու անկախ Հայաստանը, Արցախն ու Կիպրոսը:



Հսկունի վերջաւորութեան ելոյթ ունեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ երգչախումբը, որմէ ետք տեղի ունեցաւ ծաղկեպսակներու զետեղում կուսակցապետերու, քաղաքապետերու, երեսփոխաններու, դեսպաններու, բարձրաստիճան պաշտօնակատարներու եւ ժողովուրդին կողմէ:

Հինգշաբթի, 24 Ապրիլ 2014-ի առաւօտեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ եւ Հոգեհանգստեան արարողութիւն 1.5 միլիոն նահատակներու անմար յիշատակին: Հոգեհանգստեան արարողութեան ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Խորհրդարանի Նախագահ եւ ԷՏԷՔ կուսակցութեան նախագահ Պրն. Եաննակիս Օմիրու:



Շաբաթ, 26 Ապրիլ 2014-ին, Նիկոսիոյ Նարեկ Վարժարանին մէջ տեղի ունեցաւ արիւնի տուչութիւն, եզրափակելով Ապրիլեան ոգեկոչման առթիւ կազմակերպուած միջոցառումները:



«ՆԱՆՕՐ» կրտսեր պարախումբի բացառիկ ելոյթ



Շաբաթ, 10 Մայիս 2014-ին, Ստրովոլուսի Քաղաքապետարանի սրահին մեջ, մեծ յաջողութեամբ տեղի ունեցաւ Զամազգայինի «Սիփան» պարախումբի տարեկան ելոյթը, որու ընթացքին 56 անդամ հաշուող «Նանօր» կրտսերներու պարախումբը, 5 պարերով մեծ տպաւորութիւն ձգեց ու հմայեց հայ եւ օտար հասարակութիւնը: Երկարաժամ փորձերէ ետք, անթերի կատարումով եւ պարուսոյց Պրն. Պետրոս Ղարիպեանի գլխաւորութեամբ, «Նանօր» կըրտսերներու պարախումբը եկաւ փաստելու, թէ միասնական կամքով ու լուրջ մօտեցումով կարելի է հասնիլ բարձր արդիւնքներու: Ելոյթէն ետք, պետական բարձրաստիճան հրաւիրեալներն ու դեսպանները, ջերմօրէն շնորհաւորեցին Պետական Ներկայացուցիչը իր նախաձեռնութեան համար: Զոս տեղին է յիշել, թէ առաջին անգամ ըլլալով, ելոյթի տոմսերը լրիւ սպառած էին, շնորհիւ Զամազգայինի «Օշական» մասնաճիւղի եւ Երեսփոխանական Գրասենեակի միացեալ յաջող գործակցութեան: Այս ուրախ առիթով, Պրն. Մահտեսեան շնորհաւորական գիրեր յղեց Զամազգայինի Վարչութեան ու պարուսոյց Պետրոս Ղարիպեանի:

եանին, մաղթելով յարատեւութիւն եւ յաջողութիւն անոնց տարած հայապահպանման աշխատանքներուն մէջ:

Ուխտագնացութիւն դէպի Մակարավանք



Ինչպէս միշտ, այս տարի եւս, կազմակերպութեամբ Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէ Մահտեսեանի եւ համագործակցութեամբ Ազգային Առաջնորդարանի, եօթներորդ անգամ ըլլալով, Կիրակի, 18 Մայիս 2014-ին դարձեալ իրականացաւ ուխտագրնացութիւնը դէպի Սուրբ Մակարայ վանք, մասնակցութեամբ շուրջ 150 Կիպրահայերու եւ դուրսէն ժամանած հայրենակիցներու:

Ուխտագնացութիւնը կը վայելէր Կիպրոսի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (UNFICYP) հսկողութիւնը:

Ս. Մակարայ վանքի քարուքանդ ու անմխիթար խորանին դիմաց տեղի ունեցաւ պատշաճ եկեղեցական արարողութիւն՝ Տ. Վարուժան Արքեպիսկոպոսի եւ Տէր Մոմիկ Քահանայի մասնակցութեամբ, որու ընթացքին ուխտագնաց-

ները նորոգեցին իրենց ուխտը եւ հաստատակամութիւնը կառչած մնալու հայապատկան մեր վանքին:

Այս տարուայ ուխտագնացութեան մասնակցեցաւ նաեւ Փոքրամասնութիւններու Հարցերու Յանձնակատար Տիկին Բէթի Քլիրիտուն, որ շատ յուզուած ու զգացուած էր ամբողջ ուխտագնացութեան ընթացքին:

Վերադարձին, ուխտագնացները իրենց գոհունակութիւնը յայտնեցին Պետական Ներկայացուցիչին, բժախնդրօրէն կազմակերպած ըլլալուն համար այս ուխտագնացութիւնը:

Նարեկ Հայկական Վարժարաններու կեանքէն

Չորեքշաբթի, 4 Յունիս 2014-ին, տեղի ունեցաւ Նարեկ վարժարաններու տարեկան մարզահանդէսը, նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչին: Ձեռնարկի ակարտին, Պրն. Մահտեսեան կատարեց մետալներու յանձնում առաջնակարգ դիրքերը գրաւող բոլոր աշակերտներուն:

Ուրբաթ, 6 Յունիս 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նարեկ վարժարանի Գեղարուեստական Երեկոյին, որ տեղի ունեցաւ դպրոցի սրահին մէջ, մասնակցութեամբ Նարեկ վարժարանի աշակերտներուն:

Չորեքշաբթի, 18 Յունիս 2014-ին, տեղի ունեցաւ Նարեկ վարժարաններու Նախակրթարանի եւ Միջնակարգի ամավերջի հանդէսը, նախագահութեամբ Պրն. Վարդգէս Մահտեսեանի: Հանդէսի ընթացքին Պետական Ներկայացուցիչը կատարեց վկայականներու բաշխումն ու շրջանաւարտներուն եւ ընկերակցող ուսուցիչներուն յանձնեց ակամեայական իր նուէրը՝ Հայաստան շրջապտոյտի տոմսերը:

Յաջորդ օրը, Հինգշաբթի, 19 Յունիս 2014-ին, ըստ ակամեայութեան, Նարեկի շրջանաւարտները, տնօրէնութիւնն

ու ուսուցչական կազմը, ինչպես նաև կղզիի բոլոր հայ շրջանաւարտները, ներկայութեամբ Տէր Սոմիկ եւ Տէր Մաշտոց Քահանաներուն, հիւրասիրուեցան Տէր եւ Տիկին Վարդգէ Մահտեսեաններու բնակարանը:



Ձեռնարկներու ներկայութիւն

Երեքշաբթի, 1 Ապրիլ 2014-ի երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէ Մահտեսեաններ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Հ.Ս.Ը.Մ.–Հ.Ե.Մ.-ի ակումբին մէջ տեղի ունեցած զեկոյց-հաւաքին, որ կազմակերպած էր Կիպրոսի ՀՀԴ կոմիտէն: Ձեկուցաբերն էր ՀՀԴ Բիւրոյի անդամ եւ Ընկերվար Միջազգայնականի փոխ-նախագահ Մարիօ Նալպանտեան, որ անդրադարձաւ այդ օրերուն հայ ժողովուրդի դիմագրաւած զանազան հարցերուն՝ ի մասնաւորի Քեսապի ու Հայաստանի վերջին իրադարձութիւններուն:

Շաբաթ, 5 Ապրիլ 2014-ին, Նիկոսիոյ «Բալլաս» սրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ երգչախումբերու համերգը, նախագահութեամբ Նիկոսիոյ Քաղա-

քապետ Տիար Կոստանդինոս Եորկաճիսի եւ Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի, սակայն երկրէն դուրս գտնուելուն պատճառով, զայն ներկայացուց Տիկին Մակի Մահտեսեանը:

Չորեքշաբթի, 9 Ապրիլ 2014-ին, Տէր եւ Տիկին Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նարեկ Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցած Քեսապի մասին զեկուցական հաւաքին, կազմակերպութեամբ Ազգային երեք կուսակցութիւններու (ՍԴՅԿ, ԶՅԴ, ՌԱԿ) Կիպրոսի մարմիններուն:

Երկուշաբթի, 21 Ապրիլ 2014-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Զ.Ս.Ը.Ս.–Յ.Ե.Ս.ի ակումբի բակին մէջ տեղի ունեցած խմբապետական սկաուտական երդման արարողութեան:

Կիրակի, 27 Ապրիլ 2014-ին, Տէր եւ Տիկին Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Լառնաքայի Հայ Ակումբի կազմակերպած՝ Համազգայինի Լիբանանի «Այգ» երգչախումբի ելոյթին, որ տեղի ունեցաւ Լառնաքայի Քաղաքապետարանի սրահին մէջ, հովանաւորութեամբ Լառնաքայի Քաղաքապետին:

Կիրակի, 4 Մայիս 2014-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, ներկայ գտնուեցան Համազգայինի Կիպրոսի «Օշական» Մասնաճիւղի «Դիմակ» թատերախումբի «Դրախտի ճամբան Գիտէ՞ք» կատակերգութեան, բեմադրութեամբ Նաթաշա Թաւուզճեանի, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Բալլաս» սրահին մէջ: Յիշենք, թէ Պրն. Մահտեսեան յատուկ շնորհաւորական գիրեր յղելով, բարձր գնահատեց Համազգայինի «Օշական» մասնաճիւղի վարչութիւնը, Նաթաշա Թաւուզճեանը, ինչպէս նաեւ դերասաններուն սիրայօժար ու անսակարկ աշխատանքը, որոնք կը նպաստեն հայ մշակոյթի զարգացման ու պահպանման:

Կիրակի, 11 Մայիս 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան բռնագրաւեալ Ս. Աս-

տուածածին եկեղեցւոյ մէջ, 50 տարի ետք մատուցուած Սուրբ եւ Անմահ պատարագին, հանդիսապետութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Վարուժան Արքեպիսկոպոս Յերկելեանին, ներկայութեամբ մեծ թիւով պաշտօնական-պետական հիւրերու, տարբեր համայնքներու կղերականներու, դեսպաններու եւ գաղութի անդամներու: Պետական ներկայացուցիչը իր արտասանած խօսքին մէջ շեշտեց, Միացեալ Նահանգներու Կիպրոսի մէջ Դեսպան Ն.Վ. ճոն Քէօնիկի իւրայատուկ դերն ու դերակատարութիւնը, իրականութիւն դարձնելու այս պատմական եղելութիւնը: Ան շարունակելով յոյս յայտնեց, որ միասնաբար ու ձեռք ձեռքի տալով, Յոյն, Թուրք, Մարոնիթ, Հայ ու Լատին համայնքները սատար կը հանդիսանան վերջերս սկիզբ առած երկրի վերամիացման աշխատանքներուն:

Երեքշաբթի, 13 Մայիս 2014-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերշ. Տ. Վարուժան Արքեպիսկոպոս Յերկելեանի Գնահատանքի եւ Հրաժեշտի հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Պրն. Մահտեսեան իր արտասանած ողջերթի խօսքով վեր առաւ Սրբազան հօր 17 տարուան մատուցած ծառայութիւններն ու բարեկարգումները՝ ի նպաստ Կիպրահայ գաղութի հոգեւոր կեանքին ու եկեղեցապատկան կալուածներուն նկատմամբ, անոր մաղթելով քաջառողջ ու ծառայութիւններով բեղուն երկար տարիներ:

Շաբաթ, 31 Մայիս 2014-ին, Պետական Ներկայացուցիչը յատուկ հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցաւ Հայաստանի Հանրապետութեան 96-ամեակի հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Նարեկ Վարժարանի սրահէն ներս, կազմակերպութեամբ ՀՀԴ Կիպրոսի Կոմիտէին եւ յարակից միութիւններուն: Օրուան բանախօսն էր Յակոբ Գազանճեան:

Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ձեռնարկներ

Հինգշաբթի, 3 Ապրիլ 2014-ին, Պետական Ներկայացուցիչը հրավիրուեցաւ ընկերակցելու Ամերիկայի Միացեալ Նահանգներու Կիպրոսի մէջ դեսպան Ն.Վ. Շոն Քեօնիկի կազմակերպած Յոյն եւ Թուրք Կիպրացի գործարարներու այցելութեան, Կիբթորիա փողոցին վրայ գտնուող եւ վերջերս USAID-ի ծախսերով վերանորոգուած Ս. Աստուածածին եկեղեցին ու համալիրը:

Նոյն օրը երեկոյեան, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Նիկոսիոյ Կանաչ Գիծին վրայ գտնուող Home for Cooperation-ի սրահին մէջ տեղի ունեցած միջհամայնքային ձեռնարկին, ձօնուած Կիպրահայ երաժիշտ Վահան Պէտէլեանի յիշատակին:

Շաբաթ, 5 Ապրիլ 2014-ին, Պետական Ներկայացուցիչը Պրիւքսէլ մեկնեցաւ, մասնակցելու ՀՀ Սփիւռքի Նախարարութեան կազմակերպած Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի միջոցառումները համակարգող Եւրոպայի տարածքին մէջ գործող յանձնախումբերու ղեկավարներու հաւաք-հանդիպումին:

Երկուշաբթի, 7 Ապրիլ 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան պաշտօնական բացումը կատարեց ու բացման խօսքով ելոյթ ունեցաւ Գալֆայեան ընտանիքի պատմական իրերու ու հայկական արուեստի նմոշներու ցուցահանդէսին, որ տեղի ունեցաւ Leventis հանրային թանգարանին մէջ: Ապա, ան իր արձանագրութիւնը ձգեց թանգարանի տոմարին մէջ, բարձր գնահատելով Գալֆայեան ընտանիքի անդամներուն նախաձեռնութիւնը շարունակելու ընտանեկան աւանդութիւնը:

Երեքշաբթի, 8 Ապրիլ 2014-ին, Պետական Ներկայացուցիչը Կրթութեան եւ Մշակոյթի Նախարարութեան խորհրդրդածողովներու սրահին մէջ, հանդիպում մը ունեցաւ Եւրո-

պական Խորհուրդի Փոքրամասնութեանց Լեզուներու Հարցերով Յատուկ Յանձնախումբին հետ (Committee of Experts of the European Charter for Regional or Minority Languages), քննարկելու Կիպրահայ համայնքին գծով յանձնախումբի տեղեկագիրին մէջ տեղ գտած առաջարկներու գործադրումը:

Երեքշաբթի, 15 Ապրիլ 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան հրաւիրուեցաւ մասնակցելու Նորվեկիոյ, Ֆինլանտայի եւ Շուէտի դեսպանութիւններու կողմէ կազմակերպուած՝ «Միացեալ Կիպրոսի Համար Վստահութիւն Կառուցող» հաւաք-գրոյցին, որ տեղի ունեցաւ Կանաչ Գիծի վրայ գլտնուող Home for Cooperation-ի սրահին մէջ:

Հինգշաբթի, 24 Ապրիլ 2014-ի երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Dr. Johannes Lepsius-ի «Ashes and Phoenix» վաւերագրական ժապաւէնի ցուցադրութեան, որ տեղի ունեցաւ Կանաչ Գիծի վրայ գտնուող Կեօթէ հիմնարկի սրահին մէջ:

Ուրբաթ, 9 Մայիս 2014-ին, Պետական Ներկայացուցիչը հրաւեր ստանալով մասնակցեցաւ Նիկոսիոյ Համալսարանին UNESCO ամպիոնին կազմակերպած՝ «Մշակութային Քաղաքականութեան եւ Տարբերութիւններու Պատմականը Միջին Արեւելքին մէջ» նիւթով խորհրդաժողովին, որ տեղի ունեցաւ Համալսարանի UNESCO ամֆիթատրոնին մէջ:

Երեքշաբթի, 27 Մայիս 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Ակրոպոլիս Փարքին մէջ տեղի ունեցած «Խաղաղ Գոյակցութիւն» թեմայով մշակութային միջոցառումին, նախաձեռնութեամբ ՄԱԿ-ի անդամ կազմակերպութիւններու, որու ընթացքին իր մասնակցութիւնը բերաւ Համազգայինի «Սիփան» պարախումբը:

Հինգշաբթի, 29 Մայիս 2014-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Ստրովոլոսի Քաղաքապետա-

րանի սրահին մէջ տեղի ունեցած մշակութային միջհամայնքային միջոցառումին, որու ընթացքին ելոյթ ունեցան Համազգայինի «Սիփան» ու «Նանօր» մանկապատանեկան պարախումբերը:

Հինգշաբթի, 5 Յունիս 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Կրթութեան եւ Մշակոյթի Նախարար Պրն.



Կոստաս Կատիսի հետ, Կիպրահայ համայնքին հետ առընչուող կարգ մը հարցերու առնչութեամբ:

Չորեքշաբթի, 25 Յունիս 2014-ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Ռումանիոյ Խորհրդարանի Սարդկային Իրաւանց եւ Կրօնական Փոքրամասնութիւններու Յանձնախումբի ներկայացուցչութեան հետ, որ տեղի ունեցաւ Կիպրոսի Խորհրդարանի Ժողովասրահներէն մէկուն մէջ:

Նոյն օրը, Պրն. Մահտեսեան աշխատանքային ճաշ մը ունեցաւ Կիպրոսի Համալսարանի Րեկտոր Դոկտ. Կոստանդինոս Խրիստոֆիտիսին հետ, քննարկելու Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի ձեռնարկներու ծիրէն ներս միացեալ միջոցառում մը կազմակերպելու կարելիութիւնը: Նշենք, թէ նոյն օրուան առաւօտեան ժամերուն, Պետական Ներկայացուցիչը հանդիպած էր նաեւ Կիպրոսի Համալսարանի Հին Դպրութեան Ուսումնասիրութեան պատասխանատու (Dean of the School of Humanities) դասա-

խօս Նիագի Մուսթաֆա Կիզիլիբեքի հետ, հայ ժողովուրդի պատմութիւնն ու քաղաքակրթութիւնը համալսարանէն ներս բոլորին ծանօթացնելու միջոցներ գտնելու առնչութեամբ:

Երկուշաբթի, 30 Յունիս 2014-ին, Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ Հաղորդակցութեանց եւ Գործերու Նախարար Պրն. Մարիոս Տիմիթրիատիսին հետ, որու յանձնեց Հայաստանի Հանրապետութեան Փոխադրամիջոցներու եւ Կապի Նախարար Գագիկ Բեգլարեանի համաձայնութեան գիրը, Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով, երկու պետութիւններու կողմէ միացեալ յատուկ դրոշմաթուղթ թողարկելու կապակցութեամբ:



Յունիս 2014 թուակիր գիրով մը, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորեց Թեմական ժողովի եւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի Յանձնախումբի ատենապետ Պրն. Սեպուհ Դաւիթեանը, ՀՀ Սփիւռքի Նախարար Հրանուշ Յակոբեանի ձեռամբ՝ «Պօղոս Նուպար» մետալով պարգևատրուելուն ուրախ առիթով: Ան Պրն. Դաւիթեանին մաղթեց արեւշատութիւն եւ առողջ կեանք, բարձր գիտակցութեամբ շարունակելու իրեն վստահուած պաշտօնները:

Շնորհաւորագիր

5 Յունիս 2014 թուակիր գիրով մը, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորեց Թեմական ժողովի եւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի Յանձնախումբի ատենապետ Պրն. Սեպուհ Դաւիթեանը, ՀՀ Սփիւռքի Նախարար Հրանուշ Յակոբեանի ձեռամբ՝ «Պօղոս Նուպար» մետալով պարգևատրուելուն ուրախ առիթով: Ան Պրն. Դաւիթեանին մաղթեց արեւշատութիւն եւ առողջ կեանք, բարձր գիտակցութեամբ շարունակելու իրեն վստահուած պաշտօնները:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամառուայ արձակուրդի շրջանին,
Երեսփոխանական Գրասենեակը
փակ պիտի մնայ
Երկուշաբթի, 4 Օգոստոսէն
մինչեւ
Կիրակի, 31 Օգոստոս 2014-ը:

«Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետութեան
Օրէնքներուն» բաժինը լոյս պիտի տեսնէ «Լրատու»ի
յաջորդ թիւով, չձանրաբեռնելու համար մեր ընթերցողները:

ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
Հեռախօս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42
Ել. Հասցէ office@armenianmp.com
Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
Հեռախօս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42
Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy